



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ  
Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան

« 15 » 01 2020թ № 49 Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 28-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով.

**Հրամայում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2019 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում օգտագործման թույլտվություն ունեցող բույսերի սորտերի ցանկը հրապարակելու մասին» N 28-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

**1) «Ցորեն» բաժնում՝**

- ա) «Անի» տողից հետո լրացնել «Արա» տողով.
- բ) «Արայ» տողից հետո լրացնել «Արեգակ» տողով.
- գ) «Բրիգանտինա» տողից հետո լրացնել «ԳԱԽ 5» տողով.
- դ) «Պրոմոնթորի» տողից հետո լրացնել «Ռիմա» տողով.

**2) «Գարի» բաժնում՝**

- ա) «Անգին» տողից առաջ լրացնել «Անի» տողով.

**3) «Պոմիդոր» բաժնում՝**

- ա) «Նորք» տողից հետո լրացնել «Նոնաքար» տողով.
- բ) «Սոֆա» տողից հետո լրացնել «Սվետլանա» տողով.

**4) «Տաքեղ քաղցր» բաժնում՝**

- ա) «Լոշտակ» տողից հետո լրացնել «Լուսափայլ» տողով.
- բ) «Ջերմատնային հսկա» տողից հետո լրացնել «Ջերմատնային հրաշք» տողով.

**5) «Տաքեղ կծու» բաժնում՝**

- ա) «Արևաշող» տողից հետո լրացնել «Բուկետ» տողով:

2. Սույն հրամանի 2-րդ կետում «Գյուղատնտեսության նախարարության» բառերը փոխարինել «Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)» բառերով:



ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ